Այբ
կրթական
հիմնադրամ

ՄԵՆՔ ՎԵՐԱՓՈԽՈՒՄ ԵՆՔ
Հայաստանը կրթությամբ

ԵՐԵՎԱՆ 2025

«Այբ» կրթական հիմնադրամը շահույթ չհետապնդող և սեփականատերեր չունեցող կառույց է, որը 2006 թվականից բազմաթիվ կրթական ծրագրեր է իրականացնում Հայաստանում ու սփյուռքում: Մեր բոլոր ծրագրերն ուղղված են հայկական կրթության զարգացմանն ու ճանաչելիությանն ամբողջ աշխարհում:

«Այբ»-ի գաղափարի շուրջ համախմբված են մարդիկ, ովքեր իրենց ձեռքբերումները համարում են կրթության արդյունք և ձգտում են միասնական ներդրմամբ ստեղծել Հայաստանում բարձրորակ կրթություն ապահովող համակարգեր:

ՄԵՐ ՆՊԱՏԱԿԸ
Հայաստանը կրթությամբ վերափոխելն է

Ակցիա

ՄԵՐ ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆԸ

ՄԵՐ ԱՐԺԵՔՆԵՐԸ

ԿԱՏԱՐԵԼՈՒԹՅՈՒՆ

ՍՏԵՂԾԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՎՍՏԱՀՈՒԹՅՈՒՆ

ՀԱՄԱՐՁԱԿՈՒԹՅՈՒՆ

ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆ

ՄԵՐ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ

Կրթության շնորհիվ հաջողության հասած ութ երիտասարդներ 2006 թ. որոշեցին հիմնել «Այբ» կրթական հիմնադրամը՝ իրականացնելու մեր երկիրը կրթությամբ վերափոխելու իրենց երազանքն ու գաղափարը: Մի քանի գաղափարակիցների սկսած գործն այսօր Հայաստանում և նրա սահմաններից դուրս վերածվել է կրթական հզոր շարժման: Որակյալ կրթության այցեքարտ դարձած «Այբ» անունն այսօր իր շուրջն է համախմբել բազմաթիվ նվիրյալների:

Մենք ստեղծում ենք իրական կրթական հնարավորություններ, տարածում մոտեցումներ ու արժեքներ, որոնք, համոզված ենք, մեր երկրի զարգացման կարևոր նախադրյալներ են: Մեր մեծ համայնքն արդեն 19 տարի մասնագիտական, ֆինանսական և ժամանակային մեծ ներդրում է կատարում կրթության զարգացման նպատակով՝ դառնալով պետության համար հենարան ու աջակից:

47 Express Shop

Այբ

ԳԱԼԱ ԸՆԹՐԻՔ

«Այբ» գալա ընթրիքը համագործակցության, գաղափարական շփումների ու նոր նախաձեռնությունների յուրօրինակ հարթակ է: Այս նախաձեռնությունը հնարավորություն է՝ համախմբվելու կրթության շուրջ և դառնալու մեր երկրում իրական փոփոխություններ բերող համայնքի մի մասնիկ:

Այստեղ հավաքվել են մարդիկ, որոնք հավատում են կրթության ուժին: Յուրաքանչյուրի վստահությունն ու աջակցությունը բացառիկ արժեք են, և այս միջոցառումը ևս մեկ առիթ է՝ արժևորելու մեր միասնականությունը:

Այսօր աջակցելով մեր նոր սերնդին՝ դուք կարևոր ներդրում եք կատարում վաղվա Հայաստանում՝ ապահովելով կայուն զարգացման համար ամուր հիմքեր:

15 մայիս, 2025, Դվին մյուզիք հոլ, Երևան

ԳԱԼԱ ԸՆԹՐԻՔԻ ՀՈՎԱՆԱՎՈՐՆԵՐԸ

HENDERSON Armenia
համակազմակերպիչ

«ԳԱԼԱՔՍԻ» ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԽՈՒՄԲ
մեկենաս

«ԲԱՐՐԻ» ՍՊԸ
ջատագով

ԿԱՊԱՆԻ ԼԵՌՆԱՀԱՐՍՏԱՑՄԱՆ ԿՈՄԲԻՆԱՏ
հովանավոր

«ԱՊԱՎԵՆ» ՍՊԸ
աջակից

«ԶՊՄԿ» ՓԲԸ
աջակից

ԿԱՆՏԱՏԱ
աջակից

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՂՆԵՐԻ ԵՎ ԳՈՐԾԱՐԱՐՆԵՐԻ ՄԻՈՒԹՅՈՒՆ
աջակից

DB958

HENDERSON

ARMENIA

Վստահեք Ձեր ոճը HENDERSON-ին

HENDERSON.AM

Այբ
կրթական
հիմնադրամ

«ԱՅԲ» ՀԱՄԱԿԱՐԳ

«Այբ» կրթական հիմնադրամը «Այբ»-ի երեք կառույցների՝ «Այբ» դպրոցի, Դիլիջանի կենտրոնական դպրոցի, Ազգային երգ ու պարի ակադեմիայի հիմնադիրն ու համահիմնադիրն է:

Այս համակարգն իր գործունեությամբ ստեղծել է կրթական մեծ շարժում՝ տարածելով կրթության գերազանցության մշակույթ և լավագույն կրթությունը հասանելի դարձնելով բոլորին:

«ԱՅԲ» ԴՊՐՈՑ

«Այբ» դպրոցը սովորելու նոր միջավայր է, ուր ազգային հիմքի վրա մշակվում են եզակի կրթական տեխնոլոգիաներ և փորձարկվում ժամանակակից կրթության բարձրագույն ձեռքբերումները՝ ի նպաստ հայկական կրթության մրցունակության մեծացման:

ԴԻԼԻՋԱՆԻ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ

Մարզային դպրոց, որ ստեղծվել է Կենտրոնական բանկի հետ համագործակցությամբ և այսօր հանդես է գալիս որպես կրթական տարբեր նախաձեռնությունների կենտրոն ոչ միայն Դիլիջան քաղաքում, այլև ամբողջ Տավուշի մարզում:

ԱԶԳԱՅԻՆ ԵՐԳ ՈՒ ՊԱՐԻ ԱԿԱԴԵՄԻԱ

Ազգային երգն ու պարը կենցաղ վերադարձնելու և ազգային ինքնագիտակցության զարգացումը խթանելու նպատակով «Այբ» հիմնադրամը և «Կարին» ավանդական երգի-պարի խմբի հիմնադիր Գագիկ Գինոսյանը 2015 թվականի սեպտեմբերին համատեղ ստեղծեցին «Ազգային երգ ու պարի ակադեմիա» կրթամշակութային հիմնադրամը:

GALAXY
GROUP OF COMPANIES

ՀԱՄԱԽՄԲՎԱԾ ԱՌԱՔԵԼՈՒԹՅԱՆ ՇՈՒՐՋ

15	250	4	2 400	7 200	159 939 645
ԲԻԶՆԵՍ ՄԻԱՎՈՐ	ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԳՈՐԾԸՆԿԵՐ	ԵՐԿԻՐ	ԱՇԽԱՏԱԿԻՑ	ՈՒՂԻՂ ՇԱՀԱՌՈՒ ԿԱՊ ԵՎ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՆԱԽԱԳԾԵՐԻ	ԸՆԴՀԱՆՈՒՐ ՎՃԱՐՎԱԾ ՀԱՐԿԵՐ*

Նշված թիվն արտահայտված է ԱՄՆ դոլլարով, պատրաստված է միջազգային գործընկերների համար

ՄԵՐ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ

ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՂ

1100

ԴՊՐՈՑ՝

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԴՊՐՈՑՆԵՐԻ

70%

ԾՐԱԳՐԵՐՈՒՄ ՆԵՐԳՐԱՎՎԱԾ

9000

ՈՒՍՈՒՑԻՉ

ՏԱՐԵԿԱՆ ՆԵՐԳՐԱՎՎԱԾ

125 000

ԵՐԵԽԱ՝

ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ

30%

«ԱՅԲ»-Ի ՄՐՑՈՒՅԹՆԵՐՈՒՄ ՀԱՅԱՍՏԱՆԻՑ, ՍՓՅՈՒՌՔԻՑ ԵՎ ԱՐՑԱԽԻՑ ՆԵՐԳՐԱՎՎԱԾ

750 573

ՄԱՍՆԱԿԻՑ

ԱՌՑԱՆՑ ԿՐԹԱԿԱՆ
ԾՐԱԳՐԵՐԻ ՕԳՏԱՏԵՐ՝

47 583
ՍՈՎՈՐՈՂ

11 100
ՈՒՍՈՒՑԻՉ

4330
ԾՆՈՂ

«ԻՆՔՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ
ԱՐԺԵՔՆԵՐ»-Ի
20 ՀԱՂՈՐԴՈՒՄՆԵՐԻՑ
ՅՈՒՐԱՔԱՆՉՅՈՒՐԸ՝

430 000
ԴԻՏՈՒՄ

2400
ՄԱՍՆԱԿԻՑ

ԲԱՐԵՐԱՐՆԵՐԻ
ՀԱՄԱՅՆՔ **1000+** ԱՆՀԱՏ ԲԱՐԵՐԱՐՆԵՐ ԵՎ
ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՆԵՐԴՐՈՒՄ
ԿՐԹՈՒԹՅԱՆ ՄԵՋ **56,8** ՄԼՆ ԱՄՆ ԴՈԼԱՐ
ՆՎԻՐԱՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ
2006 Թ.-ԻՑ Ի ՎԵՐ

ZIGZAG

ԱՐԱՐԱՏՅԱՆ ԲԱԿԱԼԱՎՐԻԱՏ

Մեր երկրի կրթական համակարգում որակական փոփոխություններ բերելու և Արարատյան բակալավրիատի կրթական մոդելը հասանելի դարձնելու համար նախատեսում ենք՝

- ԱԲ ծրագիրը ներդնել ՀՀ մարզերում և Երևանում գործող ավագ դպրոցներում,
- ունենալ Քեմբրիջի կողմից հավաստագրված ինքնուրույն քննական կենտրոն և կրթական ռեսուրսներ:

Ծրագրի միջազգային գործընկերներն են Քեմբրիջի համալսարանի Քեմբրիջի գնահատման և միջազգային կրթության կենտրոնը (Cambridge Assessment International Education, Cambridge University) և Լոնդոնի համալսարանական քոլեջի Կրթության ինստիտուտը (UCL Institute of Education):

Արարատյան բակալավրիատի ցանցի տարածմանն աջակցելու համար գրեք donate@ayb.am հասցեին կամ կապ հաստատեք «Այբ» կրթական հիմնադրամի հետ

ԻՆՔՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱՐԺԵՔՆԵՐ

Մեր արժեքահեն առաքելության կարևոր բաղադրիչներից է հանրության հետ քննարկումների «Ինքնություն և արժեքներ» շարքը աշխարհայացքային հիմնահարցերի մասին:

Նպատակը գաղափարական մտածողության խթանումն է ու երկխոսությունը՝ թե համայնքի և թե հասարակության հետ: Այս հարթակում խոսում ենք անձնական ու հավաքական ինքնության, ճանաչողության, արժեքաբանության մասին՝ այս կարևոր թեմաների շուրջ միավորելով մտքի հեղինակավոր առաջնորդների՝ Հայաստանից և արտերկրից:

«Արարատյան բակալավրիատ» կրթական ծրագրի շրջանակում ավագ դպրոցում դասավանդում ենք նաև համանուն առարկա:

ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ԴՐԱՄԱԳԼՈՒԽ

Հիմնադրամի նպատակային դրամագլխի ձևավորման մեկնարկը տրվեց ԱՄՆ-ում 2024 թ.՝ Դավիթ Յանի հյուրընկալությամբ հրավիրված մասնավոր երեկոյի ընթացքում՝ հավաքելով առաջին 2,8 մլն ԱՄՆ դոլարը:

Նպատակային դրամագլուխը ոչ միայն խորհրդանշում է «Այբ»-ի երկարաժամկետ տեսլականն ու առաքելությունը, այլև ապագայի նկատմամբ պատասխանատվություն ստանձնելու, արժեքների շուրջ համախմբվելու և կրթությանը ծառայելու կարևոր ուղերձ է՝ ուղղված մեր հասարակությանը:

ՆՎԻՐԻ՛Ր ԱՊԱԳԱ

Մեկ կրթավճարի դրամագլուխն ապահովելու նպատակով նվիրատվության համար գրեք donate@ayb.am հասցեին կամ կապ հաստատեք «Այբ» կրթական հիմնադրամի հետ:

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԾՐԱԳԻՐ

«Այբ» ավագ դպրոցը Հայաստանի մասնավոր ոլորտում առաջին ամենախոշոր սոցիալական նախագիծն է: Ավագ դպրոցում ընդունելության շեմը հաղթահարած յուրաքանչյուր աշակերտ կարող է ուսումնառությունը շարունակել «Այբ»-ում՝ անկախ ընտանիքի ֆինանսական միջոցներից: Դպրոցում սովորող մարզաբնակ երեխաներն ըստ անհրաժեշտության ապահովվում են նաև Երևանում կեցությամբ:

«ԱՅԲ» ԱՎԱԳ ԴՊՐՈՑՈՒՄ ԱՇԱԿԵՐՏՆԵՐԻ ՇՈՒՐՋ

70%-Ը

ՍՈՎՈՐՈՒՄ Է ԲԱՐԵՐԱՐՆԵՐԻ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՄԲ

ՆԵՐԴՐՎԱԾ ԳՈՒՄԱՐ

2,8 ՄԼՆ ԴՈԼԱՐ

ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՍՏԱՑԱԾ ԱՇԱԿԵՐՏՆԵՐ

800+

Կրթավճարային ֆոնդին նվիրատվություն կատարելու համար գրեք donate@ayb.am հասցեին կամ կապ հաստատեք «Այբ» կրթական հիմնադրամի հետ

barry

Ապագայի
Կրթությունն
Սիրել անելով
ԱՅԲԵՑԻ.
ՀԱՍԱՐԱԿԱՑԻՑ
Սովորում ենք
խրախուսելով

Kapan
Mining and
Processing
Company

«ԱՅԲ» ԴՊՐՈՑ

Դպրոցը բացվել է 2011 թվականին, ապահովում է ամբողջական, արժեքահեն ու ողջ աշխարհում մրցունակ կրթություն: Այն ոչ միայն գիտելիքներ ու հմտություններ փոխանցող հաստատություն է, այլև հասարակական կյանքին ակտիվ մասնակցող կառույց: Դպրոցի առաքելությունն է՝ ձևավորել ուսյալ, առաքինի, պատկանելության և պատասխանատվության զգացում ունեցող երիտասարդների սերունդներ:

«Այբ» դպրոցը կրթական լաբորատորիա է, որտեղ փորձարկվում են նորարարական ծրագրեր, և հաջողված փորձը փոխանցվում է հանրակրթության ոլորտին:

ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ

«Արարատյան բակալավրիատ» միջազգայնորեն ճանաչված հայալեզու կրթական ծրագիր, որը համազոր է բրիտանական GCE A Levels և ամերիկյան Advanced Placement որակավորումներին

ԱՐԺԵՔԱՀԵՆ ՈՒՍՈՒՄՆԱՌՈՒԹՅՈՒՆ

Ինքնության, ճանաչողության և արժեքաբանության թեմաներով քննարկումներ և վերլուծական աշխատանքներ

ՆԱԽԱԳԾԱՅԻՆ ՈՒՍՈՒՄՆԱՌՈՒԹՅՈՒՆ

Աշակերտական թիմերի կողմից իրականացվող արդիական և հանրային նշանակության նախագծեր, որոնք ուղղված են իրական խնդիրների լուծմանը

ՄԵՐ ՇՐՋԱՆԱՎԱՐՏՆԵՐԸ

«Այբ»-ի որակավորումներով մեր շրջանավարտները կրթությունը շարունակում են աշխարհի լավագույն կրթական համակարգեր ունեցող երկրների ամենահեղինակավոր համալսարաններում, ինչպիսիք են՝

- Քեմբրիջի համալսարանը,
- Հարվարդի համալսարանը,
- Մասաչուսեթսի տեխնոլոգիական համալսարանը,
- Ստանֆորդի համալսարանը,
- Օքսֆորդի համալսարանը,
- Բերկլիի համալսարանը,
- Չիկագոյի համալսարանը,
- Կոլումբիայի համալսարանը,
- Լոնդոնի համալսարանական քոլեջը,
- Տորոնտոյի համալսարանը,
- Սինգապուրի Նանյան տեխնոլոգիական համալսարանը,
- Հոնկոնգի գիտության և տեխնոլոգիաների համալսարանը,
- Սորբոնի համալսարանը,
- Մյունխենի տեխնոլոգիական համալսարանը,
- Լյուվենի համալսարանը:

ZCMC

ZANGEZUR
PRESERVING
VALUES

ԿՐԹԱԿԱՆ ԱՎԱՆ

Հայաստանում առաջին կրթական ավանը «Այբ» կրթական հանգույցն է: Այստեղ յուրաքանչյուր տարր ունի կրթությանն առնչվող բովանդակություն և միաժամանակ նպաստում է մանկավարժության, գիտության, արվեստի, գործարարության և հասարակական կյանքի այլ ոլորտների ներդաշնակ գոյակցությանը: Ավանի ենթակառուցվածքներն են՝

- դպրոց,
- ինժեներական լաբորատորիա,
- սպորտային համալիր,
- կանաչապատ տարածքներ,
- եկեղեցի ու համայնքային կենտրոն,
- մանկապարտեզ,
- հանրակացարաններ,
- գիտության ու տեխնոլոգիայի կենտրոն:

«Այբ» կրթական հանգույցի շինությունների յուրօրինակ լուծումները «Ստորակետ» ճարտարապետական արվեստանոցինն են և արժանացել են բազմաթիվ միջազգային մրցանակների:

ԵԿԵՂԵՑԻ

Դարեր շարունակ հայ եկեղեցին և հայ դպրոցը եղել են կողք կողքի՝ ապահովելով մեր ժողովրդի հոգևոր-ազգային միասնականությունը և ճանաչողական-արժեքային ներդաշնակությունը: Ավանում եկեղեցու առկայությունը խորհրդանշելու է ճանաչողության ու բարոյական արժեքների կապը:

«Այբ»-ն այսօր Սրբոց Թարգմանչաց նորօրյա շարժման կրողն ու օրինակն է, և Թարգմանիչների՝ սբ Մեսրոպի, սբ Սահակի և նրանց աշակերտների շարժումը մեր համայնքի համար եղել է մեծագույն օրինակ և ներշնչանքի աղբյուր:

Միջազգային բաց մրցույթով, որին մասնակցել են 119 անհատ ճարտարապետ և կազմակերպություն Հայաստանից, Ռուսաստանից, Իսպանիայից, ԱՄՆ-ից, ընտրվել է ճարտարապետ Էրիկ Օհանյանի հեղինակած հայեցակարգը: Եկեղեցին կազմված կլինի քարե գրքերից, և ամեն մի գիրք կխորհրդանշի սբ Թարգմանիչներից մեկին:

Եկեղեցու կառուցմանն աջակցելու համար գրեք donate@ayb.am հասցեին
կամ կապ հաստատեք «Այբ» կրթական հիմնադրամի հետ



ԱՎԱԳ ԴՊՐՈՑԻ ՆՈՐ ՄԱՍՆԱՇԵՆՔ

Ավանի տարածքում աշխարհահռչակ ու լավագույն ճարտարապետական նախագծերի հեղինակ BIG - Bjarke Ingels Group կազմակերպության հետ համագործակցությամբ կկառուցվի ավագ դպրոցի նոր մասնաշենք, որի նախագծման աշխատանքներն արդեն մեկնարկել են:

«Այբ»-ում մենք հավատում ենք, որ կրթական միջավայրը պարզապես ֆիզիկական տարածք չէ. այստեղ ճարտարապետական յուրաքանչյուր լուծում պետք է արտացոլի մեր արժեքներն ու գաղափարները:

Նոր մասնաշենքի կառուցումը ոչ միայն կմեծացնի մրցունակ, որակյալ ու նորարար կրթության հնարավորությունները, այլև կկրկնապատկի ավագ դպրոցի աշակերտների թիվը: Սա նշանակում է, որ, ընտանիքի ֆինանսական կարողություններից անկախ, ավելի շատ երեխա հնարավորություն կունենա ստանալու լավագույն կրթություն:

Ավագ դպրոցի նոր մասնաշենքի կառուցմանն աջակցելու համար գրեք donate@ayb.am հասցեին կամ կապ հաստատեք «Այբ» կրթական հիմնադրամի հետ

ՆՎԻՐԻ՛Ր ԱՊԱԳԱ

UNION OF MANUFACTURERS
AND BUSINESSMEN OF ARMENIA

ԱՊԱՎԵՆ

Ապագայի
կրթությունն
Մեկ անգամ
ԱՅՖԵՅԻ.
ՀԱՎԵՐԺ ԱՅՖԵՅԻ

ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ԱՅԼ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՈՒ ՆԱԽԱԳԾԵՐ

Գործընկերության տարբեր ու հետաքրքիր ձևաչափեր, որոնց բոլորի նպատակը մեկն է՝ աջակցել հայկական կրթության զարգացմանն ու ճանաչմանն ամբողջ աշխարհում

Համագործակցության համար գրեք donate@ayb.am հասցեին կամ կապ հաստատեք «Այբ» կրթական հիմնադրամի հետ

Մեկ օր «Այբ»-ում

Մասնակցելով «Մեկ օր «Այբ»-ում» ծրագրին՝ ձեր աշխատակիցները բացառիկ հնարավորություն կունենան նորովի վերադառնալու դպրոց՝ մի կողմից վերապրելով դպրոցական տարիների բարի հիշողությունները, մյուս կողմից փորձարկելով ժամանակակից ու նորարար կրթության բոլոր հնարավորությունները:

«Հայաստան» դահլիճ

Այբեցիների ամենասիրելի վայրերից մեկում՝ «Հայաստան» դահլիճում, կարող եք անցկացնել թիմային հետաքրքիր հանդիպումներ ու քննարկումներ, կազմակերպել միջոցառումներ ու տարբեր մրցույթներ:

Ռազմամարզական
ավանի նվիրատուներ



Ռազմամարզական ավան

Ռազմամարզական ավանը թիմային ոգին նորովի ամրապնդելու և ամենատարբեր իրավիճակները հաղթահարելու հնարավորություն է ձեր թիմի համար:

Ուժեղ պետության գրավականը մրցունակ, մարտահրավերներ ընդունելու և դիմակայելու պատրաստ հասարակությունն է:

Բասկետբոլի դաշտ

Ձեր թիմի հետ կարող եք բասկետբոլի առաջնություն անցկացնել մեր բացօթյա նոր մարզադաշտում՝ զարգացնելով թիմային հաղթանակների ձգտումն ու ոգևորությունը:

Кантата

галерея вкусов

Մեկ անգամ
ԿՅՐԵՑԻ,
ԱՅԼԵՐԻ ԿՅՐԵՑԻՐ

SHARM

HOLDING

lumenmoments

ԳԱԼԱ ԸՆԹՐԻՔԻՆ ԱՋԱԿՑԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՇՆՈՐՀԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ ԵՆՔ ՀԱՅՏՆՈՒՄ

«Manukyan Wine» ընկերությանը,

«Mon Amie» ընկերությանը,

«Big Projects» ընկերությանը,

Ալ. Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի ազգային ակադեմիական թատրոնի Երիտասարդական օպերային ծրագրի ղեկավար Լևոն Ջավադյանին և մենակատարներին,

երաժիշտ, թառահար Միքայել Ոսկանյանին,

«Այբ» դպրոցի շրջանավարտների «Կամար» երգչախմբին և «Այբ» դպրոցի աշակերտական երգչախմբին (խմբավար՝ Անահիտ Պապայան, կոնցերտմայստեր՝ Աննա Արզումանյան),

միջոցառումը վարողներին՝ Գոհար Գասպարյանին և Նարեկ Մարգարյանին:

Ապագայի
կրթությունն

ՆՎԻՐԱՏՈՒՆԵՐ 2024

«Այբ» համայնք (միջոցառումներ)
«Արփա-Սևան» ԲԲԸ (Պարույր Հակոբյան)
«Բարրի» ՍՊԸ (Սարգիս և Մարինե Բաղայաններ)
«Զիգզագ» ՍՊԸ
Հայկական բարեգործական ընդհանուր միություն
«Միկշին» ՍՊԸ (Տիգրան Հարությունյան)
«Ռենշին» ՍՊԸ
Սալոնիկում ՀՀ պատվավոր հյուպատոսություն
«Վարդանյան ընտանիք» բարեգործական հիմնադրամ
Ադամ Կաբլանյան
Ալիկ Առաքելյան
Աղասի Մինասյան
Աննա Մանուկյան
Անուշ Մինասյան
Աշոտ Թովմասյան
Աշոտ Մկրտչյան
Արա Աբրահամյան
Արա Չալաբյան
Արամ Փախչանյան
Արայիկ Կարապետյան
Արման Ջիլավյան
Արմինե Աբգարյան
Արմինե Հովհաննիսյան
Արսեն Գալստյան
Արսեն Սարգսյան
Արտակ Առաքելյան
Արտակ Հովհաննիսյան
Արտաշես Մկրտչյան
Արտավազդ Մինասյան (10 Web)
Գագիկ Սարդարյան
Գայանե Արամյան
Գևորգ և Հերմինե Մխիթարյաններ
Գոհար Պետրոսյան
Գրեգ Շիրակյան
Գրիգոր Մարտիրոսյան
Դավիթ Յան
Դավիթ Փախչանյան
Դավիթ Քոչարյան
Դիանա Գրիգորյան

Հարգելի՛ բարեկամներ, խորին շնորհակալություն եմ հայտնում Ձեզ՝ հեղափոխության ճակատագրական օրերին, Ձեր տեղ հանձար ազգիս ու հեղափոխության Երկրի դրության կրթության պարագայում ՀՀ. այլ շատ կյանք արժեքավորելի, հանդգնաբար ճշմարտությունը ու համարձակությունը գնահատելի: Ձեր շնորհիվ նոր կարգավորում նոր դարաշրջան կերտելու Ձեր խոսքս ուղղեցի Ձեր կրթական ծրագրերի իրականացմանը՝ առաջնորդվելով Ձեր արժեքներով ու գաղափարներով...

Դավիթ Լեռնյան

11-րդ դասարան

Հարգելի՛ բարեկամներ,

Ջերմորեն շնորհակալություն եմ հայտնում Ձեր նվեր-գրքի ազնիվ նվեր հանար: Ձեր երգրդությունը Ձեր սիրելիներ բազմաձևակի են բոլոր հեղափոխություններ՝ սրանալու բարդության իրականությունը, փարվելու Ձեր փաստաբանությունը և փարատի դեպքերը ցնցի Ձեր կրթականությունը: Ես բարեբախտ երջանիկ եմ Ձեր ասածը Ձեզ Ձեր երգրդության համար:

Հարգանքով՝

«Լեռ» ազգ գրքի ավարտական դասարան

աշակերտ Հարությունյան Բաղդասար

Եվա Ադալյան

Զավեն և Փոլ Ակյաններ
(«Ակյան» հիմնադրամ)

Էդգար Ճաղարյան

Թալին Ավագյան

Ինեսսա Ալավերդյան

Իշխան Մխիթարյան

Իրինա Բադալյան

Լևոն Բուդաղյան

Լևոն Գևորգյան

Լևոն Էնֆիաջյան

Լևոն Քոչարյան

Լիլիթ Մհերյան

Լիլիթ Ոսկանյան

Կարեն Հովհաննիսյան

Կարեն Մուսայելյան

Կարո Սարգսյան

Կոնստանտին Սարոյան

Կրիստինա Ալմազյան

Կևին և Ալեքսիա Կևոնյան

Հակոբ Մոմջյան

Հայարփի Սաղաթելյան

Հայկ Եգանյան

Հայկ Պողոսյան

Հասմիկ Բեգլարյան

Հասմիկ Պետրոսյան

Հռիփսիմե Մովսիսյան

Մանանա Թարփոշյան

Մարինե Հարությունյան

Մարուսյա Ղազարյան

Մեսրոպ քահանա Արամյան

Մերի Հովսեփյան

Մերի Մելիք-Սարգսյան

Միխայիլ Մոնախով

Միքայել Յան

Նարբեհ Պետրոսյան

Նարեկ Գաբրիելյան

Նարեկ Մարգարյան

Նուբար Աֆեյան («Աֆեյան»
հիմնադրամ)

Նվարդ Առաքելյան

Շուշանիկ Բասմաջյան

Ռիտա Խաչատրյան

Ռոբերտ Խաչատրյան

Ռոզա Սահակյան

Ռուբեն Հարությունյան

Սամվել Աբրահամյան

Սերժ Խաչատրյան

Սիլվա Կարախանյան

Սիլվիա և Եվգենի Յաներ

Սինան Սինանյան

Սյուզան-Մարի Բարսեղյան

Սոլանժ Թամամյան

Սոնա Ասրյան

Սուրեն Թորոսյան

Սպարիկ Հայրապետյան

Վահագն Բալյան

Վահե Ամիրբեկյան

Վահե Մուսոյան

Վահրամ Մաթևոսյան

Վռամ Խոջագորյան

Տիգրան Բունիաթյան

Ռաֆֆի և Նինա
Ֆըսթըգճյաններ

Ռաֆֆի Նիզիբյան

Քլարիս Կաբակյան

Անանուն բարերարներ

Սիրելի բարեբարեներ,

Ձեր ազնվագույն շնորհով դարոցը դարձել է նրանաձևերի ու գաղափարների իրականացման վայր: Ձեր անգնահատելի ներդրումը ոգեշնչում է աշակերտներին կրթվել, սովորել ու զարգանալ: Շնորհակալ ենք, որ դարձաք մեր կրթության մի մասը...

Հեղա Մարտիրոսյան
12-րդ դասարան

Սիրելի բարերար

Հայցնում եմ Ձեզ խորին երախտագիտություն կրելիան պրոյեկտ Ձեր միջոցներ ներդրելու համար: Ձեր ազնվությամբ Ես գտնում եմ իմ և բացում աշակերտների հազարերջան ապագա անբաժան ուղեկիցը: Շնորհակալություն ասելու և արժանավոր լինելու համար:

Գայանե Մոսիսյան, 11-3

Մեր 19-ամյա պատմությունը հարուստ է մարդկանցով:
Մենք մեր ճանապարհին անցել ենք կրթությանը նվիրված, մեր գաղափարներն ու արժեքները գնահատող, սոցիալական բարձր պատասխանատվությամբ բացառիկ գործընկերների ու կազմակերպությունների հետ:

Ձեզնից յուրաքանչյուրի հետ ամենատարբեր ձևաչափերով ենք ամրագրել Հայաստանը կրթությամբ վերափոխելու մեր համատեղ ձգտումը:

ՇՆՈՐՀԱԿԱԼ ԵՆՔ

վստահության, կրթության մեջ ներդրման ու կարևոր ազդեցության համար

Уважаемые родители,

Наши индивидуальные «Звук» группы без исключения по праву проверенные временем, куда дети ходят годами, приобретают и совершенствуют. Наши группы все смешанные по возрасту малыш, школьники и взрослые занятия вместе, разделены возрастные рамки. Наш педагогический коллектив не будет просто, но очень разнообразно и интересно по всем направлениям развивать вас и индивидуально.

С уважением

Ваша Елена

12-ру дежурная

Այբ
կրթական
հիմնադրամ

ayb.am
donate.ayb.am
donate@ayb.am

ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ԵՎ ՆՎԻՐԱՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԴԻՄԵԼ
isabella_m@ayb.am, +374 91 012193

ayb.am
donate.ayb.am